

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՀՀ Կապան քաղաքի թիվ 7 դպրոցի կաթսայատան նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գործող սեյսմիկ շինարարության նորմերին և կանոններին:

Կաթսայատունը միահարկ է, հատակագծում ունի 7,4 և 5,0մ առանցքային չափեր, հարկի բարձրությունը 3,3մ է:

Որպես կրող կոնստրուկցիա ծառայում են 40սմ հաստությամբ ուղիղ հատվածքի տուֆ քարից շարվածքով պատերը: Գետնախարիսխը -բազալտե սալեր 30սմ հաստությամբ: Պատերի հատման տեղում տեղադրվում են ամրանային ցանցեր 300մմ քայլով:

Ծածկը իրականացվում է ե/բետոնե, միաձույլ:

Կաթսաների տակ իրականացվում են միաձույլ ե/բետոնե հիմքեր:

Կաթսայատունը ունի 350մմ տրամագծով ծխատար խողովակ, որը ունի առանձին կանգնած ե/բետոնե հիմք և ճկուն կապերով ամրացվում է կաթսայատան ծածկին:

Տանիքը միաթեք է , իրականացվում է փայտյա կոնստրուկցիաների վրա հենվող ցինկապատ պրոֆիլավորված թիթեղից ծածկույթով: Օգտագործվող փայտանյութը - սոճի կամ եղևնի: Փայտյա կոնստրուկցիաները պետք է պատել հականեխիչ և հրապաշտպան լուծույթներով:

Հիմքերը բետոնե ժապավենային են: Կառույցի հիմքերի խրամուղիները փորելուց հետո և հիմքերը լցնելուց առաջ անհրաժեշտ է կատարել հիմնատակ ծառայող գրունտների զննում ինժեներ-երկրաբանի կողմից, կազմելով համապատասխան ակտ:





Նախատեսվում է հիմքերի հորիզոնական ջրամեկուսացում ցեմենտի շաղախով:

Կաթսայատան եզրագծով նախատեսվում է սալվածք:

Շինարարության տեղանքը գտնվում է III սեյսմիկ գոտում:

Հարաբերական 0,00 միշը համապատասխանում է 765.20 բացարձակ միշին:

NN	ԱՆՎԱՆՈՒՄ	ԹԵՐԹ
1	2	3
1	ԳԼԽԱԹԵՐԹ	-
2	ՀԱՏԱԿԱԳԾԵՐ , ՃԱԿԱՏՆԵՐ	ՃՇ - 1
3	ԿՏՐՎԱԾՔ : ՀԱՏԱԿՆԵՐԻ, ԴՈՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ	ՃՇ - 2
4	ՏԱՆԻՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ, ԿՏՐՎԱԾՔՆԵՐ, ՄԱՍՆԱԳԻՐ	ՃՇ - 3
5	ՀԻՄՔԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ, ԿՏՐՎԱԾՔՆԵՐ ՀԱՆԳՈՒՅՑ Հ-1	ՃՇ - 4
6	ԾԽՆԵԼՈՒՅՁԻ ՁԳԱԼԱՐԻ ՀԻՄՔԵՐ, ՄԱՍՆԱԳԻՐ	ՃՇ - 5
7	ԾԱԾԿԵՐԻ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ՍԽԵՄԱ , ԿՏՐՎԱԾՔ	ՃՇ - 6
8	ՄԻԱՁՈՒՅԼ ԲԱՐԱՎՈՐ, ԿՏՐՎԱԾՔՆԵՐ, ՄԱՍՆԱԳԻՐ	ՃՇ - 7

ՏՆՕՐԵՆ	Մ.ՀՈՒՄՆՅԱՆ		Ք.ԿԱՊԱՆ ԹԻՎ 7 ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ /ՏԵՂԱԿԱՊՈՒՄ/			
ՆԳՃ	Մ.ՀՈՒՄՆՅԱՆ					
ՆԱԽԱԳԾԵՑ	Ա.ԽԱՍՏՅԱՆ		ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ / ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆ /	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՍՏՈՒԳԵՑ	Ն.ՍՏԵՓԱՆՅԱՆ			ԱՆ	-	1
			ԳԼԽԱԹԵՐԹ	«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ		